

2024թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԱՍԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





**ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման, զբոսաշրջության բաժնի 2024 թվականի առաջին կիսամյակի աշխատանքների**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Դիլիջան» ազգային պարկում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանն ու պահպանմանը:

**«Դիլիջան» ԱՊ տարածքների մոնիթորինգային և պաշտպանության միջոցառումների իրականացում**

Կատարվել են պարկի ոլսկային տարածքներում քամատապալ, ձյունակոտոր ծառերի հաշվառման աշխատանքներ: Ծառերը չափագրվել և համարակալվել են signumat մուրճով (softwood էլեկտրոնային ծրագրում ներառելու նպատակով), ինչպես նաև շագանակագույն յուղաներկով: Կազմվել են համապատասխան փաստաթղթերը, այնուհետև փայտանյութը տեղափոխվել է վարչական շենքի տարածք՝ ներքին պահեստ:

Իրականացվել են շրջայցեր, որոնց ընթացքում առավել ուշադրություն է դարձվել պարկի ոլսկային (սահմանային, բնակավայրերին մոտ) գոտիներում գտնվող անտառային տարածքների սանիտարական վիճակին: Իրականացվել է խախտված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված 2 միջոցառում՝ «Շամախյան տեղամաս» մասնաճյուղում իրականացված անտառվերականգնման աշխատանքների արդյունքը 45-50% է:



Կազմվել է ՀՀ ՆԳՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության հետ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում հրդեհների արձագանքման պլանը:

«Հաղարծին» տեղամաս - մասնաճյուղի թիվ 14 և թիվ 8 պահաբաժիններում իրականացվել է շրջայց, որի ընթացքում հաշվառվել է՝ ԲԷՑ 3 2023 պայմանագրով նախատեսված, հատված, սակայն դեռևս դուրս չբերված ծառերի քանակը և փայտանյութի ծավալը: Փայտանյութը դուրս կբերվի բարենպաստ եղանակային պայմանների դեպքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրացվել է 49խմ վառելափայտ՝ ներքին պահեստից և հաշվետու ժամանակահատվածում ազգաբնակչությանը տրամադրվել է 18 խմ անվճար վառելափայտ /մինչև 8սմ ջախ-ճյուղիկներից/:

### **Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակություն**

Հարող բնակավայրերից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ այցելած քաղաքացիների հետ տեղի են ունեցել քննարկումներ պարկի տարածքներում մարդու գործունեության վնասակար ազդեցությունների վերաբերյալ: Քաղաքացիներն տեղեկացվել են փայտանյութի մթերման թույլատվությունների տրամադրման ընթացակարգի և տեղի ունեցած փոփոխությունների մասին: 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել են ընդհանուր 15 միջոցառում, որից 2-ը համայնքի բնակիչների հետ, 13-ը ուսումնական հաստատությունների հետ ընդհանուր 523 մասնակիցների համար, որից 89-ը համայնքի բնակիչներ են, 434-ը՝ ուսումնական հաստատությունների սաներ: 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացվել է 7 միջոցառում, որից 1-ը համայնքի բնակիչների հետ, 6-ը ուսումնական հաստատությունների հետ, ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 300 որից 69-ը համայնքի բնակիչներ են, 231-ը՝ ուսումնական հաստատությունների սաներ:

### **«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հաշվառում - տեղազննումների իրականացում**

«Դիլիջան» ազգային պարկ»-ի տարածքներում իրականացվել են քամատապալ, ձյունակոտոր փայտանյութի հաշվառման աշխատանքներ: Հաշվառվել է 430 ծառ՝ 870 խտխմ ծավալով, որոնց համար կազմվել են հաշվեզնահատման ցուցակներն ըստ



պահաբաժինների: Սակայն քամատապալ ծառերի քանակն ավելանում է հնտենսիվ տեղումների, քամիների պատճառով: Սեղմ ժամկետներում վերջնարդյունքներ կամփոփվեն:

Էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են անտառխախտման արձանագրությունների կազմման աշխատանքներ՝ տարածքների և տեղադիրքերի ճշգրտման, փայտանյութի հաշվարկի իրականացման նպատակով: Մինչ 2024 թվականի հունիսի 27-ը Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից կազմվել է 55 անտառխախտման արձանագրություն, որից 1 հրդեհի վերաբերյալ, 11-ը փայտանյութի ապօրինի դուրս բերման և 43-ը՝ ապօրինի ծառահատման վերաբերյալ՝ 231 ծառ, 314,196 խտխմ ծավալով:

2023 թվականի նոյեմբերի 28-ին տրված Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ N0206-23 Պետական փորձաքննական դրական եզրակացության հիման վրա իրականացվել է «Շամախյան» տեղամաս մասնաճյուղի թիվ 2 պահաբաժնով անցնող գազատարի ուղեգծում առկա ծառերի չափազրման աշխատանքներ, կազմվել է հաշվեգնահատման ցուցակ, հետագայում օրենքի շրջանակներում ընթացք տալու նպատակով:





## **ԴԱԴ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ**

Կենսաբազմազանության տվյալների բազայում բույսերի տեսակային կազմի և դրանց աճելավայրերի գրանցման նպատակով 2024 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել են նյութեր: Բազայում կենդանիների վերաբերյալ տվյալները գրանցվել են տեղամաս - մասնաճյուղում կենդանիների հետքերի վերաբերյալ հավաքագրված տվյալների համաձայն:

Բազայում առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է 571 բուսատեսակ / որից՝ 551-ը 2-րդ եռամսյակում/, 23 սնկեր, 169 անուն կենդանի /որից՝ 104-ը 2-րդ եռամսյակում /, որոնք պատկանում են հետևյալ ընտանիքներին.

1. Երկկճղակավորների կարգ՝
  - Եղջերուների ընտանիք՝ այծյամ
  - Խոզերի ընտանիք՝ վարազ
2. Գիշատիչների կարգ՝
  - Արջերի ընտանիք՝ գորշ արջ
  - Շնագզիների ընտանիք՝ աղվես, գայլ, շնագայլ
  - Կատվազգիների ընտանիք՝ անտառային կատու
  - Կզաքիսազգիներ՝ աքիս, կզաքիս, գորշուկ
3. Նապաստականմանների ընտանիք՝ շեկ նապաստակ
4. Կրծողների կարգ՝ սկյուռ,







## **«Դիլիջան» ազգային պարկի գիշատիչների և երկկնդակավորների մոնիթորինգ՝ տեսակների ապրելավայրերի, թվաքանակի և միգրացիոն ուղիների վերաբերյալ**


«Դիլիջան» ազգային պարկում գորշ արջի մոնիթորինգի իրականացման համար հավաքագրվել են նյութեր: 2024 թվականին ԴԱՊ-ի տարածքում ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանվել է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական և ժամանակավոր (սեզոնային) դիտակետեր, երթուղիներ՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար:

2024 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է արջերի թվով 34 առանձնյակ, որից 27-ը՝ 2-րդ եռամսյակի ընթացքում: Կատարվել է 2020-2024թթ առաջին կիսամյակի ընթացքում արջերի թվաքանակի վերլուծություն և կազմվել է համեմատական դիագրամ, որի արդյունքային ցուցանիշներով երևում է, որ առաջին կիսամյակի կտրվածքով արջերի գրեթե նույն թվաքանակ գրանցվել է 2020-2022 թվականներին, իսկ ամենաշատ թվաքանակ գրանցվել է 2023-2024թթ. ընթացքում: Վերջին երկու տարիներին նկատվում է արջերի թվաքանակի կտրուկ բարձրացում և միաժամանակ արջերը նկատվում են առավել ցածր գոտիներում: Ներկայացված տվյալները հետազայում ենթակա են փոփոխության, քանի որ փետրվար ամսին ԴԱՊ-ի և NABU հայաստանյան մասնաճյուղի համագործակցության շրջանակներում, ցանցային եղանակով տեղադրվել են ֆոտոթակարդներ, որոնց արդյունքները դեռևս վերծանված չեն:





2020-2024թթ. 1-ին կիսամյակի  
ընթացքում Կովկասյան գորշ արջի /  
*Ursus arctos* / թվաքանակի  
համեմատական դիագրամ




«Դիլիջան» ազգային պարկում եվրոպական այծյամների (*Capreolus capreolus*) գլխաքանակի ուսումնասիրության իրականացման համար հավաքագրվել են նյութեր, իրականացվում է տեսակի կետային և երթուղային ուսումնասիրություն, տեղադրվել են ֆոտոթակարդներ: Բազայում այծյամները գրանցվել են առկա կենսագործունեության հետքերի, նստատեղերի, մազահետքերի վերաբերյալ հավաքագրված տվյալների համաձայն: 2024թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է ընդհանուր 78 առանձնյակ, որից 48-ը՝ 2-րդ եռամսյակի ընթացքում:

Կատարվել է 2020-2024թթ առաջին կիսամյակների ընթացքում գրանցված այծյամների թվաքանակի վերլուծություն և կազմվել է համեմատական դիագրամ, որի արդյունքային ցուցանիշներով երևում է, որ առաջին կիսամյակի կտրվածքով այծյամների քիչ թվաքանակ գրանցվել է 2020, 2022 և 2023թթ ընթացքում, իսկ շատ թվաքանակ գրանցվել է 2021, 2024 թվականների ընթացքում: Ըստ մասնագիտական կանխատեսումների առանձնյակների թվային ցուցանիշների տատանումները կարող են պայմանավորված լինել եղանակային պայմաններով, կերի առկայությամբ կամ միգրացիոն ուղիների հանգամանքով: ԴԱՊ-ի և NABU հայաստանյան մասնաճյուղի կողմից



տեղադրված ֆոտոթակարդների տվյալների համաձայն մոնիթորինգ կիրականացվի նաև վերոնշյալ տեսակների համար:



**«Դիլիջան» ազգային պարկի տարածքում, ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող բույսերի ուսումնասիրություն և մոնիթորինգ**

2024 թվականի առաջին կիսամյակում տեղեկատվություն է հավաքագրվել ԴԱՊ-ի, ՀՀ Կարմիր գրքում գրանցված խոլորձագգիների, հիրիկագգիների և շուշանագգիների տեսակային կազմի վերաբերյալ: Նյութեր են հավաքագրվել վերոնշյալ ընտանիքներին պատկանող բուսատեսակների հնարավոր աճելավայրերի, տեսակային առանձնահատկությունների, վեգետացիոն շրջանների վերաբերյալ: 2-րդ եռամսյակի



ընթացքում նախապես ընտրված տարածքներում, 3 ընտանիքների ուսումնասիրման նպատակով իրականացվել են շրջայցեր, դիտայցեր, կատարվել է բուսատեսակների վիզուալ զննում, լուսանկարում, տեղադրվել կետային փորձահրապարակներ /1x10 կամ 3x3/, և իրականացվել է տվյալների հավաքագրում: Յուրաքանչյուր բուսատեսակի աճի և զարգացման բնորոշ ժամանակահատվածում տվյալ բուսատեսակից հավաքվել են հերբարիումային նմուշներ, ինչպես նաև դիտարկումներ են իրականացվել դրանց աճելավայրերի և պոպուլիացիաների ընդհանուր վիճակի վերաբերյալ: Ուսումնասիրություններ և դիտարկումներ կիրականացվեն նաև հաջորդ եռամսյակների ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրության շրջանակներում գրանցվել են «Դիլիջան ազգային պարկի» տարածքում աճող, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները, որոնցից յուրաքանչյուրի համար տեղադրվել են կետային, տեղամասային փորձահրապարակներ /1x10 կամ 3x3/, ինչպես նաև կատարվել է թիրախային տեսակների, էկոհամակարգերի, կազմած համակեցությունների ուսումնասիրություն և տվյալների հավաքագրում: Ուսումնասիրություններն իրականացվելու են նաև հաջորդ եռամսյակների ընթացքում:

1. Պոպուլիկ Մարշալի (*Corydalis marschalliana*) (EN),
2. Պապլոր դժգույն (*Muscari pallens*) (EN),
3. Էպիպոգիում անտերև (*Epipogium aphyllum*) (EN),
4. Հողմածաղիկ գորտնուկային (*Anemone ranunculoides*) (EN),
5. Եզնակող Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*) (VU),
6. Կենի հատապտղային (*Taxus baccata*) (VU),
7. Ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*) (NT),
8. Շուշան հայկական (*Lilium armenum*) (NT),







## **«Դիլիջան» ազգային պարկի մերձալայան գոտիների էկոհամակարգերի ուսումնասիրություն և հերբարիումների պատրաստում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Դիլիջան» ազգային պարկի մերձալայան գոտիների կենսաբազմազանության ուսումնասիրություն, տեսակային հարստության գնահատում, բուսատեսակների հերբարիումային նմուշների հավաքում և պատրաստում: Դիտայցեր են իրականացվել Շամախյան, Դիլիջան, Հաղարծին տեղամաս-մասնաճյուղերում: Տեղադրվել են կետային, ժամանակավոր փորձահրապարակներ /1x10, 3x3/, կատարվել է բուսատեսակների, էկոհամակարգերի, համակեցությունների ուսումնասիրություն և տվյալների հավաքագրում: Տեսակների քանակական հաշվարկները կատարվել են 3x3մ չափերի A1, C1, A3 և C3 քառակուսիներում, իսկ կենտրոնական B2 քառակուսիում կատարվել է տեսակային հարստության հաշվարկ: Դիտարկումների շրջանակներում 1 քառակուսում միջինում գրանցվել է 5-ից 13 բուսատեսակ, որը կազմված է տարբեր համակեցություններից:

	A /1մ/	B / 1մ/	C /1մ/
1/1մ/			
2/1մ/			
3/1մ/			





Հաշվետու ժամանակահատվածում մերձալպյան գոտիներում կատարված դիտարկումների համաձայն բուսականության ընդհանուր վիճակը գնահատվում է լավ՝ էկոհամակարգերը խաթարված չեն, բացակայում է անթրոպոգեն գործոնը, չկա աղտոտվածություն և պաշտպանված է: Որոշ հատվածներում պայմանավորված ձնածածկույթի առկայությամբ/ Շամախյան տեղամաս մասանաճյուղ/ բուսատեսակների մոտ գրանցվել է վեգետացիոն փուլերի տատանում, որի արդյունքում էլ հնարավոր չի եղել հստակ իրականացնել տեսակային հարստության ուսումնասիրություն: Մերձալպյան գոտիներում հիմնական համակեցությունները տարախոտային կազմված խառը համակեցություններն են: 1x10մ չափերի փորձահրապարակներում կախված տեղադիրքից և բույսերի աճելավայրի պայմաններից միջինում գրանցվում 7-19 ընտանիքի պատկանող բուսատեսակներ:

1	2	3	4	5	6	7	8	9	10


Ստորև ներկայացված է Հաղարծին տեղամաս-մասնաճյուղի 37 քառակուսում 1x10մ չափերի շարժական փորձահրապարակում գրանցված բույսերի տեսակային կազմը, որոնք կարող են փոփոխվել պայմանավորված տեղադիրքից:

1. Հացազգիներից՝ հանդիպում է Բարակոտնուկ սանրանման (*Koeleria cristata*), Դաշտավլուկ մարգագետային (*Poa pratensis*), Դաշտավլուկ անտառային (*P. nemoralis*), Ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), Խմրախոտ բուրավետ (*Anthoxanthum odoratum*), Ոսկեվարսակ սիբիրյան (*Trisetum sibiricum*)
2. Գնարբուկազգիներից է Գնարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*),



3. Բարդաձողկավորներից՝ Տերեփուկ դեղնամանուշակագույն (*Centaurea cheiranthifolia*),
4. Կակաչազգիներից՝ Կակաչ խոշորակնգուղ (*Papaver macrostomum*),
5. Ակքանազգիներից՝ Քոսքսուկ կովկասյան (*Scabiosa caucasica*), Զիվան հսկայական (*Cephalaria gigantea*),
6. Գորտնուկազգիներից՝ Հողմածաղիկ գծավոր (*Anemone fasciculata*), Ձղկի գորտնուկային (*Trollius ranunculinus*), ընձախոտ արևելյան (*Aconitum orientale*),
7. Շուշանազգիներից՝ Շուշան հայկական (*Lilium armenum*),
8. Զանգակազգիներից՝ զանգակ խմբված (*Campanula glomerata*),
9. Շրթնածաղկազգիներից՝ Թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*),
10. Հովանոցազգիներից՝ Անիսոն եռաբաժան (*Pimpinella tripartita*),
11. Կաղամբազգիներից՝ Ձագախոտ գեղեցիկ (*Erysimum pulchellum*),
12. Ասպլենազգիներից՝ Ասպլեն մազանման (*Asplenium trichomanes*), ասպլեն հյուսիսային (*A. septentrionale*) և այլն:

Հավաքագրված տեղեկատվությունը գրանցվել է կենսաբազմազանության բազայի բույսերի բաժնում: Մերձալպյան գոտիներից հավաքվել է 10 բուսատեսակի հերբարիումային նմուշ: Ոսումնասիրությունը կրում է շարունակական բնույթ: Մերձալպյան գոտիների ընդհանուր տեսակային կազմի, քանակական ցուցանիշների, արեալների ընդհանուր վիճակի մասին վերջնական տեղեկատվությունը կարող է ներկայացվել առնվազն 3 տարվա շարունակական ուսումնասիրությունների արդյունքում:







## **Թեյերի և թուրմերի համար բուսատեսակների հավաքում և փաթեթավորում**

Հաշվետու ժամանակահատվածում դիտայցերի, շրջայցերի ժամանակ բոլոր տեղամաս – մասնաճյուղերից ըստ բույսերի օգտագործման ճիշտ ժամանակահատվածի հավաքվել, տեսակավորվել և չորացվել են թեյերի, թուրմերի պատրաստման համար օգտագործվող՝ տարբեր հատկություններ ունեցող 2 անուն բուսատեսակներ: Յուրաքանչյուր բուսատեսակից 20-ական փաթեթ կփաթեթավորվի հաջորդ եռամսյակների ընթացքում: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Հավաքված բուսատեսակներն են՝

1. Mentha longifolia – Դաղձ երկարատերև
2. Thymus collinus – Ուրց բլրակային



## **Հավելյալ աշխատանքներ**

***Թանթրվենի / Sambucus / բուսաբուսակի գեներատիվ օրգաններից կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացման և համեմատման ուսումնասիրություն***

ՎՊՀ և ԴԱՊ համագործակցության շրջանակներում, «Դիլիջան» ազգային պարկում 3-րդ տարին շարունակ իրականացվում է թանթրվենի սև /Sambucus nigra/ և թանթրվենի խոտային /Sambucus ebulus/ բուսատեսակների գեներատիվ օրգաններից կենսաբանորեն ակտիվ նյութերի ստացման և համեմատման ուսումնասիրություն: Բոլոր տեղամաս մասնաճյուղերից հավաքվել են թանթրվենու ծաղկաբույլեր, ծաղիկներ, պտուղներ և արմատ: ՎՊՀ Բնական գիտությունների ֆակուլտետում լաբորատոր պայմաններում թանթրվենու բուսահումքից ստացվել է բնական ներկեր, թեյերի, թուրմերի պատրաստման համար հումք, ինչպես նաև թանթրվենու ծաղիկներից հյութ, որը կարող է օգտագործվել բուսաբուժության



նպատակով: Ընդհանուր աշխատանքն իրականացվել է 3 տարվա կտրվածքով, որի վերջնարդյունքներն ներկայացվել են 2024թ 1-ին կիսամյակի ընթացքում:



### **«Դիլիջան» ազգային պարկի էկոհամակարգերի ուսումնասիրություն**

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները՝ ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտական խմբի հետ իրականացրել են ազգային պարկի էկոհամակարգերի և Կարմիր գրքային տեսակների ուսումնասիրություններ: Տեղամասնանձյուղերում ուսումնասիրության համար անհրաժեշտ թիրախային հատվածներում տեղադրվել են փորձահրապարակներ, կատարվել են ուսումնասիրություններ, տվյալների հավաքագրում, որոնք կրում են շարունակական բնույթ:



### **Դիլիջան» ազգային պարկի «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»-ի վերաբերյալ տվյալների հավաքագրում**

Դիտայցեր են իրականացվել «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»՝ եղջերուների մոտ կենսաֆիզիոլոգիական փոփոխությունների, արտաքին կառուցվածքի (մազաձածկույթի փոփոխության, եղջյուրների փոխարինման), ինչպես նաև վերարտադրության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կենտրոնում ծվել է 7 ձագ, արու առանձնյակների մոտ ձևավորվել են նորաճ եղջյուրները և կատարվել է մազաձածկույթի սեզոնային փոփոխություն:





**«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU Armenia ) միջև համագործակցություն**

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի, Գերմանիայի բնության պահպանության միության (NABU Armenia) հայաստանյան մասնաճյուղի և Շրջակա միջավայրի նախարարության համագործակցության շրջանակներում 2-րդ տարին շարունակ իրականացվում է կենսաբազմազանության /ձկնաբանական, թռչնաբանական և բուսաբանական/ ուսումնասիրություններ և դաշտային աշխատանքներ, որի վերաբերյալ հաշվետվությունները կներկայացվեն տարեվերջին:



**Ուսումնական պրակտիկա «Դիլիջան» ազգային պարկում**

«Դիլիջան» ազգային պարկի և Վանաձորի պետական համալսարանի միջև համագործակցության շրջանակներում ազգային պարկում ուսումնական պրակտիկա է անցկացվել ՎՊՀ-ի Բնական գիտությունների ֆակուլտետի «Կենսաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին և բակալավրի 2-րդ կուրսերի ուսանողների համար:

Պրակտիկայի ուսումնական մասում ուսանողները ծանոթացել են ազգային պարկի կենսաբազմազանությանը, գործունեությանը, ինվազիվ, կարմիր գրքային տեսակներին, հերբարիումային նմուշներին, ծառերի տարիքաչափի կիրառմանն ու ֆոտոթակարդների ձևերին: Պրակտիկայի դաշտային մասում ուսանողների համար շրջայց է իրականացվել «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»-ում, որտեղ ծանոթացել են





կենտրոնի գործունեությանը և նպատակներին: Ուսանողների կողմից հավաքվել են բուսատեսակների նմուշներ, որոնցից հետագայում կպատրաստվեն հերբարիումներ:



### **Շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ «Դիլիջան» ազգային պարկում**

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել է շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ Պարզ լիճ, Հաղարծին վանական համալիր, Զուխտակ, Աղավնավանք վանքեր տանող ճանապարհներին, ոլորաններում ինչպես նաև Գոշ լճի և կազմակերպության վարչական շենքի հարակից տարածքներում: Միջոցառման ավարտին, Դիլիջանի համայնքապետարանի աջակցությամբ, հավաքված աղբը մեքենաների միջոցով տեղափոխվել է դրա համար նախատեսված վայրեր:





**Էկոլոգիական, ճանաչողական, դասընթաց – սեմինարների, արշավների  
իրականացում ուսումնական հաստատությունների սաների, էկոխմբակների,  
արշավային խմբերի համար**

***Խաչարձանի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 29 /***

Բնապահպանական կրթության, շրջակա միջավայրի մասին գիտելիքների ձեռքբերման, բնապահպանական գործունեության հմտությունների և ընդհանուր բնապահպանական մշակույթի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Խաչարձանի միջնակարգ դպրոց: Աշխատակիցներն աշակերտներին ներկայացրել են «Դիլիջան» ազգային պարկի մասին բուսական և կենդանական աշխարհի, շրջակա միջավայրի մաքրության խնդրի, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի, էկոտուրիզմի զարգացման հնարավորությունների, բնության պահպանության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ: Տնօրինության և համապատասխան մասնագետների հետ քննարկվել է հետագա համագործակցության վերաբերյալ մի շարք հարցեր:



***Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց / 48 մասնակից /***

Վայրի բնության /մարտի 3/ համաշխարհային օրվան ընդառաջ՝ գիտական բաժնի աշխատակիցները, Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել և ներկայացրել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոլոգիական



դասընթաց սեմինարներ՝ հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

«Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է»

ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման ձևերին: Գիտելիքների ամրապնդման նպատակով հարց ու պատասխանի միջոցով քննարկվել են աշակերտներին հետաքրքրող հարցերը:



### **Հովքի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 27 /**

«Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցներն այցելել են Հովքի միջնակարգ դպրոց: Այցելության ժամանակ, մասնագիտական կողմնորոշում առարկայի շրջանակներում, 6-9-րդ դասարանների աշակերտների համար իրականացվել է բաց և քննարկվող ձևաչափով դասընթաց և ներկայացվել են հետևյալ թեմաները.

- «Բնապահպանական կրթությունը, նպատակներն ու խնդիրները: Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն»
- «ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, ուղեկցորդը, որպես պահանջված մասնագետ»

Գիտելիքների ամրապնդման նպատակով հարց ու պատասխանի միջոցով քննարկվել են աշակերտներին հետաքրքրող հարցերը:






*Քաղաքացիական կրթությունը,  
նպատակներն ու խնդիրները:  
Քաղաքացիական  
21-րդ դարի մասնագիտություն*



**Գոշի հիմնական դպրոց / մասնակիցների թիվը 20 /**

Գոշի հիմնական դպրոց այցելության շրջանակներում 5-9-րդ դասարանների աշակերտների համար գիտական բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել և ներկայացվել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոլոգիական դասընթաց-սեմինարներ, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

- «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է»
- ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման ձևերին: Հետագա համագործակցության, դասընթացների և արշավների կազմակերպման նպատակով տնօրինության հետ ձեռք է բերվել համաձայնություն:







**Թեղուտի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 51/**

Էկոլոթական ծրագրերի իրականացման շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցների կողմից Թեղուտի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների համար անց է կացվել ինտերակտիվ դասընթաց-սեմինար՝ գիտելիքների ստուգման և ազատ քննարկումների ձևաչափի շրջանակներում, հետևյալ թեմաներով՝

- «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է»
- «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը:
- «Մարդ – բնություն փոխհարաբերություն»





### **Գոշի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 5 /**

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից Գոշի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանների աշակերտների համար Բնություն առարկայի, բույսերի բաժնի վերաբերյալ թեմայի շրջանակներում իրականացվել է «Ես ճանաչում եմ իմ համայնքում աճող բուսատեսակները» թեմայով դասընթաց, որի շրջանակներում աշակերտներին ներկայացվել է Գոշ համայնքի հարակից տարածքում աճող բուսատեսակները՝ մասնավորապես ներկայացվել է Կարմիր գրքային տեսակները, դեղաբույսերը, ուտելի, համեմունքային և ներկատու բուսատեսակները: Խոսվել է դրանց կարևորության, ինչպես նաև բնության բարիքներից ճիշտ օգտվելու մասին:



### **Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 23/**

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով.

- «Անտառների դերն ու նշանակությունը»
- «Ծառահատումների հետևանքները»
- «Զուրը կյանք է»

Դասընթաց-քննարկման շրջանակներում սահապատկերների միջոցով ներկայացվել է մարդ-բնություն փոխհարաբերության, անտառների պահպանության, ինչպես նաև անտառների պահպանության գործում մարդու դերի և կարևորության վերաբերյալ:

Հարց ու պատասխանի միջոցով ամփոփվել է դասընթացի նյութը: Դասընթացի վերջում աշակերտների համար կազմակերպվել է տեսողական հիշողությունը զարգացնող, էկոլոգիական խաղեր, ներկայացված նյութն ամրապնդելու նպատակով:





**Աղավնավանքի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 31/**

Բնապահպանական գիտելիքի օրվան նվիրված «Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցներն Աղավնավանքի միջնակարգ դպրոցի 6-11-րդ դասարանների աշակերտների համար իրականացրել են Էկոկրթական, ճանաչողական, ինտերակտիվ դասընթաց-սեմինար հետևյալ թեմաներով՝

- 1.«Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն», «Բնապահպանական կրթությունը, նպատակներն ու խնդիրները»
2. «Դիլիջան» ազգային պարկի կարմիր գրքային տեսակները»

Հարց ու պատասխանի միջոցով ամփոփվել է դասընթացի նյութը: Դասընթացի վերջում աշակերտների համար կազմակերպվել է տեսողական հիշողությունը զարգացնող, էկոկրթական խաղեր:





**Գավառի պետական բժշկական քոլեջ / մասնակիցների թիվը 43/**

«Դիլիջան» ազգային պարկ են այցելել «Գավառի պետական բժշկական քոլեջ»-ի բուժքույրական, բուժական կոսմետոլոգիայի, ատամնատեխնիկական գործ 1-3 -րդ կուրսերի ուսանողները:


Հանդիպման շրջանակներում ազգային պարկի աշխատակիցների կողմից ներկայացվել է «Դիլիջան» ազգային պարկի աշխարհագրական դիրքը, պատմությունը, ջրագրությունը, լանդշաֆտները և էկոհամակարգերը, կառուցվածքը, կենսաբազմազանությունը, ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները, դեղաբույսերը, ծանոթացել են բույսերի հերբարիումային նմուշներին, դրանց պատրաստման կանոնների հետ: Նեղ մասնագիտական դասընթաց է ներկայացվել «Դիլիջան» ազգային պարկի դեղաբույսերը թեմայով: Ուսանողները սովորել են ֆոտոթակարդների և տարիքաչափի կիրառման ձևերը: Հարց ու պատասխանի միջոցով ամփոփվել է դասընթացի նյութը:



**Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոց / մասնակիցների թիվը 46/**

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից, Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոցի 6-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է ինտերակտիվ սեմինար-քննարկում, «Էկոկրթությունը և նրա կարևորությունը», «Կարմիր գրքային տեսակները» թեմաներով: Քննարկման հիմնական նպատակն աշակերտներից յուրաքանչյուրի մոտ աշխարհաճանաչողության բարձր մակարդակի ձևավորումն է, այդ թվում կարևորելով շրջակա միջավայրի, բնության ճանաչումը և նրա կարևորությունը մարդու կենսակերպում:






## **Արշավ- այցելություններ**

### **Գոշի հիմնական դպրոցի 5-9-րդ դասարանների աշակերտներ**

*/ մասնակիցների թիվը 41/*

Կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում Գոշի հիմնական դպրոցի 5-9-րդ դասարանների աշակերտներն այցելել են եղջերուների կենտրոն: Հանդիպման շրջանակներում ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, ծանոթացել են եղջերուներին, կենտրոնի գործունեությանը: Ինչպես նաև ներկայացվել է ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման ձևերին:





## **Դիլիջան խոշորացված համայնքում գործող «Հույսի կամուրջ» ՀԿ-ի սաներ**

*/ մասնակիցների թիվը 18/*

Դիլիջան խոշորացված համայնքում գործող «Հույսի կամուրջ» ՀԿ-ի սաներն այցելել են եղջերուների կենտրոն: Ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, ծանոթացել են եղջերուներին, դրանց տեսակային առանձնահատկություններին, կենտրոնի գործունեությանը և նպատակին:



## **ABC» Մանկական Չարգացման և Ժամանցի կենտրոնի սաներ**

*/ մասնակիցների թիվը ' 52/*

«ABC մանկական զարգացման և ժամանցի կենտրոն»-ի հետ համագործակցության շրջանակներում կենտրոնի նախադպրոցական և ամառային, օտարերկրացի խմբակների 3-ից 14 տարեկան սաների համար կազմակերպվել է այցելություն եղջերուների կենտրոն: Սաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով, ներկայացվել է կենտրոնի գործունեության նպատակը, եղջերուների առանձնահատկությունները, ինչպես նաև կազմակերպվել է ժամանցային, բնապահպանական թեմաներով ուսուցողական խաղեր: Սաներին ժամանակ է տրամադրվել իրենց պատկերացմամբ ներկայացնել եղջերուներին՝ նկարների տեսքով:









**«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի, գիտական բաժնի, 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված դասընթացներ, արշավներ**

Եռամսյակ		Ամսաթիվ	Դասընթացի թեման	Կրթական հաստատություն	Մասնակի ցների թիվ	
<b>I կիսամյակի</b>	<b>I եռամսյակ</b>	1	31 հունվար	«Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն» «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը «ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակները» «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, հետագա զարգացման ուղղությունները	<b>Խաչարձանի միջնակարգ դպրոց / 6-ից 9-րդ դասարաններ/</b>	29
		2	22 փետրվար	«Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է» ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները	<b>Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց /9-րդ դասարաններ/</b>	48
		3	23 փետրվար	«Բնապահպանական կրթությունը, նպատակներն ու խնդիրները: Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն» «ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, ուղեկցորդը, որպես պահանջված մասնագետ»	<b>Հովքի միջնակարգ դպրոց / 6-9-րդ դասարաններ/</b>	27
		4	28 փետրվար	«Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն» «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է» ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները	<b>Գոշի հիմնական դպրոց /5-9-րդ դասարաններ/</b>	20
		5	6 մարտ	«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը «ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակները»	<b>Թեղուտի միջնակարգ դպրոց / 7-8-րդ դասարաններ/</b>	51
		6	19 մարտ	«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը «Ես ճանաչում եմ իմ համայնքում աճող բուսատեսակները»	<b>Գոշի միջնակարգ դպրոց /5-րդ դասարան/</b>	5
		7	22 մարտ	«Անտառների դերն ու նշանակությունը» «Ծառահատումների հետևանքները» «Ջուրը կյանք է»	<b>Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց / 7-դասարան/</b>	23

**Մասնակիցների ընդհանուր թիվը I եռամսյակում**

**203** 27




**II եռամսյակ**

8	16 ապրիլ	«Բնապահպան՝ 21-րդ դարի մասնագիտություն», «Բնապահպանական կրթությունը, նպատակներն ու խնդիրները» «Դիլիջան» ազգային պարկի կարմիր գրքային տեսակները»	<b>Աղավնավանքի միջնակարգ դպրոց /6-11-րդ դասարանների /</b>	31
9	16 մայիս	«Դիլիջան» ազգային պարկի աշխարհագրական դիրքը, պատմությունը, ջրագրությունը, լանդշաֆտները և էկոհամակարգերը, կառուցվածքը, կենսաբազմազանությունը, ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները, դեղաբույսերը:	<b>Գավառի պետական բժշկական քոլեջ / 1-3 րդ կուրսի ուսանողներ/</b>	43
10	20 մայիս	«Էկոկրթությունը և նրա կարևորությունը», «Կարմիր գրքային տեսակները» թեմաներով	<b>Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոց / 6-9-րդ դասարանների աշակերտներ /</b>	46
11	24 մայիս	Հանդիպման շրջանակներում ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, եղջերուների, կենտրոնի գործունեությունը: Ինչպես նաև ներկայացվել է ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման ձևերին:	<b>Գոշի հիմնական դպրոցի /5-9-րդ դասարանների աշակերտներ/</b>	41
12	27 մայիս	Ազգային պարկի կենսաբազմազանությունը, ծանոթացել են եղջերուներին, կենտրոնի գործունեությանը:	<b>«Հույսի կամուրջ» ՀԿ-ի սաներ / 6-14 տարեկան/</b>	18
13	13 հունիս	Սաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով ներկայացվել է կենտրոնի գործունեության նպատակը, եղջերուների առանձնահատկությունները, ինչպես նաև կազմակերպվել է ժամանցային, բնապահպանական թեմաներով ուսուցողական խաղեր	<b>ABC» Մանկական ՉարգՊ և սմանցի Կենտրոնի սաներ / 3-14 տարեկան /</b>	52
<b>Մասնակիցների ընդհանուր թիվը II եռամսյակում</b>				<b>231</b>
<b>Ընդհանուր թիվը / 1-ին կիսամյակ/</b>				<b>434</b>



## ԴԱՊ-ի առավել ակտիվ ռեկրացիոն գոտիների և էկոերթուղիների առկա իրավիճակի գնահատում, մոնիթորինգ

Հաշվետու ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի էկոտուրիստական երթուղիների առկա վիճակի գնահատման նպատակով իրականացվել են շրջայց-դիտայցեր առավել այցելվող քայլարշավային արահետներում: Պարբերաբար շրջայցերի ժամանակ ուշադրություն է դարձվել արահետների սանիտարական վիճակին, կահավորանքին, ուղղորդիչ նշանների առկայությանը: Արահետներում իրականացվել են նաև գույքագրման աշխատանքներ, ինչի արդյունքում հաշվառվել և գրանցվել է վերանորոգման, նորով փոխարինման ենթակա գույքը:





## Հուշագրեր ունեցող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ շարունակական համագործակցություն

Արահետներ փոփոխության համար ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում սպասարկվել են Դիլիջան-Պարզ լիճ, Պարզ լիճ Գոշավանք, Գոշավանք-Գոշի լիճ-Խաչարձան, Կենու պուրակի արահետները: Նախատեսվում է սպասարկել նաև Շշնջացող ջրվեժ, Թաքնված ջրվեժ տանող արահետները, Ապակեքարի արահետը: Սպասարկման ընթացքում թարմացվել են բոլոր ուղղորդող գծանշումները՝ հին ցուցանակները փոխարինվել են նորերով: Արահետներ փոփոխության համար ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ԴԱՊ-ի 25 էկոերթուղիներից 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում սպասարկվել են 10 արհետ: Մյուս 15 արահետներում իրականացվել են շրջայցեր, նյութերի հավաքագրում: Եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով սպասարկում կիրականացվի հաջորդ եռամսյակի ընթացքում:





## Հանգստի ձևերի մոնիթորինգ, տվյալների բազայի թարմացում

2024 թվականի առաջին կիսամյակում այցելուների կենտրոն են այցելել 570 զբոսաշրջիկ, որից 527-ը 2-րդ եռամսյակում: Այցելուները ստացել են համապարփակ տեղեկատվություն և խորհրդատվություն ԴԱՊ-ի արահետների և էկոտուրիստական հնարավորությունների վերաբերյալ:

Գ/Գ	Օր/ամիս/տարի	Այցելուների թիվը	Այցելուների երկիրը	Այցելուների սեռը		Այցելուների տարիքը /մոտավոր/	Այցելուների մարդ
				արական	իգական		
1	31.01.2024	5	Հայաստան	2	3	30-40, 6-8, 12	Մոցենարդյան վանքերի արահետ
2	27.02.2024	4	Հայաստան	1	3	20-25	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
3	29.02.2024	1	Վերմանիա	1		33	Ծննդատեղի
4	13.03.2024	4	Ռուսաստան	2	2	30-35, 10-12	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
5	13.03.2024	1	ՍՍՀ	1		40	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
6	27.03.2024	4	Ռուսաստան	2	2	20-30	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
7	29.03.2024	2	Հունաստան	1	1	27-30	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
8	29.03.2024	22	Հայաստան			18-22, 36	Սպանելարի արահետ
9	04.04.2024	2	Վերմանիա	2		20-25	Թաթևյան ջրվեժի արահետ
10	04.04.2024	1	Ռուսաստան	1		27	Ծննդատեղի
11	04.04.2024	1	Հայաստան		1	20-25	Անտառի աղբայի արահետ
12	05.04.2024	1	Ռուսաստան		1	55-60	Մոցենարդյան վանքերի արահետ
13	10.04.2024	4	Ռուսաստան	2	2	20-30, 15	Թաթևյան ջրվեժի արահետ
14	10.04.2024	5	Ռուսաստան	1	4	35-40, 6-12	Թաթևյան ջրվեժի արահետ
15	11.04.2024	1	Ռուսաստան	1		60	ՊԱՊ
16	12.04.2024	2	Ռուսաստան	1	1	27-29	Հանամանի արահետ
17	12.04.2024	7	Ֆինլանդիա	2	5	20-30	Մոցենարդյան վանքերի արահետ
18	12.04.2024	6	Ռուսաստան	4	2	25-35, 12-15	Բյուրեղյա արահետ
19	13.04.2024	17	Հայաստան			30-35, 13-16	Սպանելարի արահետ
20	15.04.2024	2	Ֆինլանդիա	1	1	30-40	Ծննդատեղի
21	17.04.2024	5	Հայաստան	2	3	30-35, 20-15	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
22	18.04.2024	19	Հայաստան			16-18, 30-35	Պարոյին, Բաղմազյան կենտրոն
23	19.04.2024	23	Ռուսաստան			30-40	Բյուրեղյա արահետ
24	19.04.2024	4	Ռուսաստան	2	2	20-25	Բյուրեղյա արահետ
25	19.04.2024	2	Ռուսաստան	2		20-25	Հանամանի արահետ
26	19.04.2024	7	Հայաստան	2	5	30, 28, 15-18	Հանամանի արահետ
27	21.04.2024	4	Ռուսաստան	1	3	26-30, 8-12	Թաթևյան ջրվեժի արահետ
28	21.04.2024	6	Վերմանիա	3	3	30-40, 15-18	Թաթևյան ջրվեժի արահետ
29	21.04.2024	6	Ռուսաստան	6		20-30	Թաթևյան ջրվեժի արահետ
30	21.04.2024	4	Հայաստան	4		20-28	Թաթևյան ջրվեժի արահետ
31	21.04.2024	2	Ռուսաստան		2	28-30	Թաթևյան ջրվեժի արահետ
32	22.04.2024	8	Հայաստան	4	4	40-30-35, 15	Թաթևյան ջրվեժի արահետ
33	22.04.2024	2	Հայաստան	1	1	25-30	Ծննդատեղի
34	22.04.2024	2	Ռուսաստան	1	1	26-28	Հանամանի արահետ
35	22.04.2024	1	Ռուսաստան	1		60	ՊԱՊ
36	25.04.2024	2	Ռուսաստան	1	1	30	Ծննդատեղի
37	25.04.2024	6	Ռուսաստան	4	2	20-30	Մոցենարդյան վանքերի արահետ



38	25.04.2024	2	Սևզիա	1	1	50-60	Հանակակի պրահեռ
39	26.04.2024	2	Ռուսաստան	1	1	30	Ծննդացող ջրվեժ
40	28.04.2024	26	Հայաստան			20-30	Ապակեբարի պրահեռ
41	28.04.2024	12	Հայաստան			20-30 10-15	Ծննդացող ջրվեժ
42	29.04.2024	2	Հայաստան	1	1	20-25	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
43	29.04.2024	6	Ռուսաստան	3	3	20-35	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
44	29.04.2024	5	Հայաստան	3	2	35-40 15-17	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
45	30.04.2024	1	Ռուսաստան		1	45	Ծննդացող ջրվեժ
46	06.05.2024	8	Հայաստան	5	3	30-40 12	Թաթնված ջրվեժի պրահեռ
47	10.05.2024	6	Վրաստան	4	2	30-50	Քվի
48	10.05.2024	1	Ռուսաստան	1		20	Ծննդացող ջրվեժ
49	15.05.2024	1	Ռուսաստան		1	21	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
50	20.05.2024	2	Սևզիա	1	1	30-35	Թաթնված ջրվեժի պրահեռ
51	20.05.2024	3	Ռուսաստան	2	1	20-30	Ծննդացող ջրվեժ
52	20.05.2024	1	Հայաստան	1		40	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
53	21.05.2024	16	Հայաստան	9	9	18-35	Տրանսկոմյասյան պրահեռ
54	21.05.2024	1	Ռուսաստան	1		61	Թաթնված ջրվեժի պրահեռ
55	23.05.2024	5	Ռուսաստան	1	4	5, 15-17 30-35	Թաթնված ջրվեժի պրահեռ
56	23.05.2024	12	Վրաստան	4	8	20-30	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
57	23.05.2024	2	Ռուսաստան	1	1	27	Միջնարարյան վանքեղի պրահեռ
58	24.05.2024	7	Հայաստան	2	5	30-35 13-14	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
59	27.05.2024	3	Ռուսաստան	3		18-25	Ծննդացող ջրվեժ
60	27.05.2024	29	Վրաստան			18-40	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
61	28.05.2024	2	Ռուսաստան	2		20	Հանակակի պրահեռ
62	29.05.2024	5	Հայաստան	2	3	25-31	Միջնարարյան վանքեղի պրահեռ
63	30.05.2024	14	Ռուսաստան	8	6	20-35	Երկնքի իայեղի պրահեռ
64	30.05.2024	1	Ռուսաստան	1		21	Ծննդացող ջրվեժ
65	31.05.2024	6	Հայաստան	6			Թաթնված ջրվեժի պրահեռ
66	03.06.2024	8	Հայաստան	6		20-35	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
67	04.06.2024	2	Հայաստան	1	1	34, 29	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
68	05.06.2024	19	Ռուսաստան			25-35	Բյուրեղյա պրահեռ
69	07.06.2024	7	Հայաստան	3	4	20-30	Միջնարարյան վանքեղի պրահեռ
70	07.06.2024	1	Ռուսաստան	1		26	Ծննդացող ջրվեժ
71	10.06.2024	30	Հայաստան			15-17 20-30	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
72	10.06.2024	3	Հնդկաստան	1		24	Բյուրեղյա պրահեռ
73	10.06.2024	9	Իսպանիա, Հայաստան	3	6	30 40-45	Թաթնված ջրվեժի պրահեռ
74	11.06.2024	1	Ռուսաստան	1		42	Ապակեբարի պրահեռ
75	12.06.2024	2	Ռուսաստան	1	1	30	Երկնքի իայեղի պրահեռ
76	12.06.2024	2	Հայաստան	1	1	31, 34	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
77	12.06.2024	20	Հնդկաստան	11	9	18-35	Միջնարարյան վանքեղի պրահեռ
78	14.06.2024	3	Ռուսաստան	2	1	19-24	Հանակակի պրահեռ
79	17.06.2024	7	Իրան	2	5	25-30	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
80	17.06.2024	11	Հայաստան	4	7	7, 18 30-40	Թաթնված ջրվեժի պրահեռ
81	18.06.2024	5	Հայաստան	1	4	20-30	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
82	19.06.2024	23	Ռուսաստան, Հայաստան			20-35	Ապակեբարի պրահեռ
83	19.06.2024	3	Ռուսաստան	3		18-26	Միջնարարյան վանքեղի պրահեռ
84	19.06.2024	1	Հայաստան		1	28	Անտաղի պրահեռ
85	19.06.2024	1	Ռուսաստան	1		31	Երկնքի իայեղի պրահեռ
86	20.06.2024	6	Հնդկաստան	3	3	18-27	Պարզ լիճ, Բազմազան կենտրոն
87	24.06.2024	2	Ռուսաստան	1	1	30	Ծննդացող ջրվեժ
88	25.06.2024	22	Հայաստան			17-22	Միջնարարյան վանքեղի պրահեռ
89	25.06.2024	1	Գերմանիա	1		59	Միջնարարյան վանքեղի պրահեռ
90	25.06.2024	3	Հայաստան	1	2	20-25	Միջնարարյան վանքեղի պրահեռ

30.06. 2024թ դրությամբ՝

- «Ազնվացեղ եղջերուների բազմազան կենտրոն» են այցելել 11 400 և ավելի զբոսաշրջիկ:
- «Ազնվացեղ եղջերուների բազմազան կենտրոն»-ի մուտքավճարից ստացվել է 5 695 208 ՀՀ դրամ եկամուտ
- Պարզ լճի կայանատեղի 1 778 603 ՀՀ դրամ եկամուտ
- Տաղավարների վարձակալությունից ստացվել է 12 700 ՀՀ դրամ եկամուտ
- Վաճառվել է 16 տուփ թեյ ստացվել է 11 200 ՀՀ դրամ եկամուտ:



## ԴԱՊ-ի դեգրադացված տարածքների մոնիթորինգ

2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում «Դիլիջան» ազգային պարկի «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղում իրականացվել են դեգրադացված տարածքների մոնիթորինգ: Դեգրադացված հատվածների հայտնաբերման, դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով պարբերաբար շրջայց-դիտայցեր են կատարվել «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի հետևյալ հատվածներում.

- ✓ 5-րդ պահաբաժնի 10-11-րդ քառակուսիներում /40°48'15,57"N 44°56'14.72"E/, /40°47'41,65"N 44°56'15.72" E /,
- ✓ 6-րդ պահաբաժնի 12-13-րդ քառակուսիներում /40°47'11,24"N 44°57'27,12"E/ /40°46'36,76" N 44°56'23,34" E/,
- ✓ 7-րդ պահաբաժնի 15-րդ քառակուսում /40°48'7,28"N 44°59'57.08"E/,
- ✓ 13-րդ պահաբաժնի 18-րդ քառակուսում /40°48'28,23"N 44°52'25,13"E/:

Մասնավորապես նյութեր են հավաքագրվել ծառահատված և գերարածեցված հատվածների, տվյալ տարածքի ծառատեսակների, բույսերի առկա իրավիճակի և աշխարհագրական կոորդինատների մասին:

«Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի 7-րդ պահաբաժնի 15-րդ քառակուսում /40°48'7,28"N 44°59'57.08"E/ իրականացված մոնիթորինգի ժամանակ արձանագրվել է, որ տվյալ հատվածում /10x10մ/ առկա են ապօրինի հատված 6 ծառերի կոճղեր, 28 մատղաշներ /19բոխի, 5 կաղնի, 4 հաճարենի/, 6 հատ մապրենու և 3 հատ մոշենու թփեր, ինչպես նաև տարածքում առկա է տարբեր համակեցություններից կազմված խառը բուսականություն: Մատղաշների միջին տարիքը կազմում է 10-13 տարեկան, հստակ երևում է, որ տվյալ հատվածում բոլոր մատղաշները թերաճ են, ինչպես նաև սաղարթն ամբողջական չէ, ինչն էլ վկայում է, որ տարածքում բացի ապօրինի ծառահատումից առկա է նաև արածեցում, որի հետևանքով էլ մատղաշների բարձրությունը՝ 30սմ-90սմ է: Բոլոր տեղամաս մասնաճյուղերում մոնիթորինգ կիրականացվի նաև հաջորդ եռամսյակների ընթացքում:





## Ընթացիկ աշխատանքների իրականացում

Սահմանված ժամկետում կատարվել են նախարարության և տնօրինության կողմից ստացված հանձնարարականները և հրամանները, պատասխանվել են գրություններին: Բաժնի աշխատակիցների կողմից տեղամաս - մասնաճյուղերում պարբերաբար իրականացվել են շրջայցեր: Կատարվել են տարածքների տեղադիրքերի ճշգրտման աշխատանքներ, գույքագրվել և չափագրվել են ազգային պարկի տեղամաս-մասնաճյուղերի բոլոր տաղավարները: Կատարվել է ԴԱՊ-ի պաշտոնական ֆեյսբուքյան էջի թարմացման, նորությունների, ճանաչողական, բնապահպանական, էկոլոթական նյութերի տեղադրման աշխատանքներ:

Գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության  
բաժնի պետ

Դ. Առուստամյան

Գլխավոր անտառագետ

Ն. Հովհաննիսյան

Կենսաբան

Ա. Սաֆարյան

Մոնիթորինգի մասնագետ

Մ. Գուլինյան

Էկոզբոսաշրջության մասնագետ

Թ. Ալիսանյան

Կադաստրի վարման մասնագետ

Հ. Քոչարյան